Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2018 թվականի ապրիլի 19-ի
N 62-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից 2018 թվականի փետրվարի 21-ից մարտի 06-ը Գյումրի համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում արձանագրված խախտումների վերացման միջոցառումների

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ			
Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու
1	2	3	4
1.	Կազմել և համայնքի հաստատմանը ներկայացնել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի, ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի պահանջների	18 մայիսի 2018թ.	Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժին, բաժնի պետ՝ Ա.Հակոբյան
2.	Ձեռնարկել և կիրառել միջոցներ՝ համայնքի բյուջեի սեփական եկամուտների լիարժեք կատարման ուղղությամբ՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի պահանջների	մշտապես	Համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին, բաժնի պետ՝ Ս. Ջանոյան
3.	Յուրաքանչյուր տարի հաստատել համայնքի գնումների պլանը և այն հրապարակել gnumner.am կայքում՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ և 17-րդ կետերի պահանջների	մշտապես	Համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժին, բաժնի պետ՝ Լ.Ջիլավյան
4.	Քննարկել, ձեռնարկել և կիրառել միջոցներ՝ 1)համայնքի գերեզմանատներում հուղարկավորության կազմակերպումը ստանձնողին գերեզմանի վկայականի տրամադրման ուղղությամբ, 2)համայնքի գործող գերեզմանատների հողերի օգտագործման, հատակագծի մշակման և հաստատման ուղղությամբ, 3)գերեզմանատների մուտքերի մոտ գերեզմանատների հատակագծերի տեղադրման ուղղությամբ,	մշտապես	Համայնքի ղեկավար, համայնքի «Հավերժ հիշատակ» ՓԲԸ տնօրեն՝ Ա.Դավթյան

1	2	3	4
	4)գերեզմանատների պարսպից (ցանկապատից) առնվազն 10 մետր հեռավորությամբ սանիտարական գոտիների հատկացման ուղղությամբ: Սույն կետի քննարկման և կիրառման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշմամբ հաստատված կարգի N 1 հավելվածի 9-րդ կետի, N 4 հավելվածի 10-րդ, 15-րդ կետերի պահանջներով		
5.	1) համապատասխան մասնագետների հետ քննարկել համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի հարցը, 2) համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման կազմելուց և այն ավագանու կողմից հաստատվելուց հետո, համայնքի ղեկավարը որոշում է ընդունում համայնքում անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման, կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ: Սույն կետի կատարումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջի կատարման անհրաժեշտությամբ	Ճանապարհային երթևեկության սխեման հաստատելուց հետո 20-օրյա ժամկետում	Համայնքի ղեկավար, համայնքի ավագանի, համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին, բաժնի պետ՝ Կ.Մանասյան
	Առևտրի և ծառայությունների բնագավառ		
6.	Ուսումնասիրել, ձեռնարկել և կիրառել միջոցներ՝ 1)համայնքի վարչական տարածքում անհատ անձանց կողմից, առանց համապատասխան թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելը, բացի ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտրից նաև այլ ապրանքների վաճառքը բացառելու ուղղությամբ, 2)սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստով ապահովման ուղղությամբ, 3)դեպի օբյեկտի մուտք տանող մատուցայինև հետիոտնային ճանապարհների, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակների, սանհանգույցների առկայության ապահովման ուղղությամբ, 4)կենցաղային ծառայության օբյեկտներում՝ սպառողներին տեսանելի տեղում մատուցվող ծառայությունների գնացուցակը փակցնելը ապահովելու ուղղությամբ:	մշտապես	Համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժին, բաժնի պետի ժ/պ՝ Ռ. Անդրիասյան

1	2	3	4
	Սույն պահանջները կատարելիս առաջնորդվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 6-րդ հոդվածի 1-ին մասի «դ» և «ե» կետերի, 17-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով:		
Սոցիալական պաշտպանության բնագավառ			
7.	Քննարկել և հնարավորության սահմաններում տալ համապատասխան լուծումներ. 1)շենքերի ներսում հարկից հարկ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար հարթակների ստեղծմանը, 2)համայնքի հասարակական տրանսպորտից օգտվող հաշմանդամություն ունեցող սայլակավոր անձանց համար տրանսպորտային միջոցները կահավորել նստեցման և իջեցման հարթակներով: Սույն կետի պահանջների քննարկման ընթացքում առաջնորդվել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի դրույթներով:	մշտապես	Համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժին, բաժնի պետ՝ Ա.Հակոբյան տրանսպորտի բաժին, բաժնի պետ՝ Ա.Սարգսյան
Առողջապահության բնագավառ			
8.	Ելնելով համայնքի բյուջեի հնարավորություններից՝ քննարկել և գտնել համապատասխան լուծումներ. 1)համայնքի վարչական տարածքում տեղադրված աղբարկղների մաքրման և ախտահանման հարթ մակերես ունեցող կափարիչների տեղադրման ուղղությամբ, 2)աղբարկղների վրա աղբահանություն իրականացնող ընկերության հասցեի կամ անվանման կամ ծածկագրի առկայության ապահովման ուղղությամբ, 3)աղբարկղները յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ ախտահանել՝ դրա համար օգտագործելով հատուկ ախտահանիչ և վարակազերծիչ միջոցներ՝ ըստ վերջիններիս ուղեկցող հրահանգների: Սույն կետի պահանջները կատարելիս առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի 11-րդ, 12-րդ և 18-րդ կետերի դրույթներով:	մշտապես	Համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին, բաժնի պետ՝ Կ.Մանասյան, «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ տնօրեն՝ Գ.Մկրտչյան
Տրանսպորտի և կապի բնագավառ			
9.	Համապատասխան մասնագետների հետ քննարկել և մշակել ճանապարհային նշաններով կահավորման տերատեղման սխեմաները՝ ՀՀ կառավարության 2006թվականի հունիսի 29-ի N 1206-Ն որոշմամբ	մշտապես	Համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա

1	2	3	4
	սահմանված կարգին համաձայն: Սխեմաները կազմելուց հետո դրանք համաձայնեցնել ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 1644-Ն որոշմամբ սահմանված կարգով:		միջավայրի պահպանության բաժին, բաժնի պետ՝ Կ.Մանասյան
Արտակարգ իրավիճակների բնագավառ			
10.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը տրամադրելուց հետո սահմանված կարգով նախատեսել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ և դրանք համապատասխան ընթացակարգով ներառել համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մեջ՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման 1-ին կետի պահանջի:	մինչև ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի ավարտը	Համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժին, բաժնի պետ՝ Ա.Հակոբյան